ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՎԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախագծային մեթոդի արդյունավետությունը մայրենի լեզվի ուսուցման դասաժամերին

Աշխատության հեղինակ՝ Մալխասյան Ելենա Արմենի

Աշխատանքի ղեկավար՝ Հակոբյան Լիլիկ Երվանդի

ԳԱՎԱՌ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ 1

Մայրենի լեզվի կարևորությունը և նախագծային մեթոդի կիրառման անհրաժեշտությունը մայրենիի ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու մեջ:-5

Գլուխ 2
«Մեվանա լիճը» թեմայի ուսումնասիրություն նախագծային մեթոդի կիրառմամբ----------7
Եզրակացություններ.....14
Օգտագործված գրականության ցանկ.....15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ հանրակրթության առաջնային նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական կարողությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է: Առաջնահերթ է սովորողների համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Ներկայիս կրթական բարեփոխումները և դրանցից բխող պահանջները մեծապես պայմանավորված են նաև սովորողների նախաձեռնողական և սովորել սովորելու կարողունակության խթանմամբ, ինչը անգնահատելի դեր ունի սովորողների անձի ձևավորման, զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մեր երկրում ամենօրյա ռեժիմով արդիականացվում է կրթական համակարգը՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ արդիականացման ճանապարհին մեծապես կարևոր են նաև մանկավարժամեթոդական հնարների, դասի տարբեր տիպերի ու ձևերի կիրառումը դպրոցում:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների բազմաբովանդակ իրականության մեջ սովորողներն ավելի նախաձեռնող են դարձել գիտելիք ստանալու, այդ գիտելիքը կիրառելու առումով, ինչը մեծապես պայմանավորված է տեղեկատվական հոսքերի հասանելիությամբ, իսկ ավանդական ուսուցչակենտրոն դասն այլևս դժվարանում է բավարարել սովորողների հիմնական մասի կրթական պահանջմունքները:

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվել են ութ կարողունակություններ, որոնց զարգացման ամենաարդյունավետ մեթոդը նախագծային մեթոդն է:

Նախագծային ուսուցման ներդրումը ՀՀ կրթական համակարգում կարևորագույն քայլ է, որը սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը խթանելու արդյունաշատ գործիք կարող է դառնալ ուսուցչի համար:

«Նախագիծ» (Projet) բառը ֆրանսերենից թարգմանված նշանակում է «դեպի առաջ», «Ճանապարհ դեպի նպատակ»: Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ առաջացել է անցյալ դարի 20-ական թվականներին ԱՄՆ-ում: Այն կոչվում է նաև խնդիրների մեթոդ: Հեղինակն է Ջոն Դյուին[1]:

Հետազոտության թեմայի արդիականությունը տեսական գիտելիքի ու գործնական կիրառության կապի ապահովումն է:

Ըստ Ջոն Դյուի՝ «Կրթությունը պատմելը և պատմությունները լսելը չէ, այն ակտիվ և կառուցողական գործընթաց է»:

Նախագծային մեթոդը ուսուցման այնպիսի եղանակ է (մեթոդ է), որի դեպքում սովորողն անմիջապես ներառվում է ակտիվ իմացական գործընթացի մեջ, ինքնուրույն ձևակերպում է իր խնդիրը, իրականացնում անհրաժեշտ տեղեկատվությունների հավաքագրում, վերլուծում է սեփական գործունեությունը, եզրակացություններ անում, պլանավորում խնդրի լուծման տարբերակները և արդյունքում ձեռք բերում նոր գիտելիքներ և կենսափորձ: Սովորողի դերը մոտիվացնող է: Պասիվ լսողից նա դառնում է ակտիվ մասնակից, հետազոտող, գործունեություն ծավալող, հայտնագործող: Սովորողը կարողանում է զգալ սովորածի օգտակարությունը և վայելել գիտելիք ունենալու հմայքը ու աշխատանքի արդյունքի բերկրանքը: Նախագծային մեթոդը թույլ է տալիս լուծել իրական կյանքին առնչվող խնդիրներ: Ըստ չինական հայտնի ասացվածքի՝ «Պատմի՛ր ինձ, և ես կմոռանամ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, ներգրավիր ինձ, և ես կսովորեմ»:

Մեծ է նախագծային ուսուցման դերը ԿԱՊԿՈՒ աշակերտների համար, քանի որ հնարավորություն է ընձեռնվում խնդրի լուծման տարբեր մոտեցումներ կիրառել, ներգրավել տարբեր մասնագետներ և ծնողներ: Դպրոցական ծրագրում ներառելով՝ հավասար հնարավորություններ են ստեղծվում բոլոր սովորողների համար, քննադական մտածողությամբ, բազմակողմանի զարգացած՝ 21-րդ դարի մարտահրավերներին պատրաստ քաղաքացի ձևավորելու համար:

Հետազոտության նպատակը:

Ուսումնասիրել նախագծային մեթոդի կիրառությունը մայրենի լեզվի դասավանդման ժամանակ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրը:

•սովորողների մոտ ձևավորել՝ վերլուծական մտածողություն որոշումներ կայացնելու, տեղեկատվություն ստանալու և օգտագործելու, պլանավորելու կարողություններ

•զարգացնել քննադատական մտածողություն, հաղորդակցման և համագործակցային հմտություններ

• բարելավել մայրենի լեզվի իմացությունը

ԳԼՈՒԽ 1. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐԵՆԻՒ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԵՋ

Մեծ մանկավարժ Կ. Ուշինակին ասել է. «Ուսումնասիրելով մայրենի լեզուն՝ միայն պատմական հնչյուններ չէ, որ սովորում է երեխան, այլև հոգևոր կյանք և ուժ է ըմպում մայրենի լեզվի մայրական կրծքից... Եթե մի լեզու, որով սկսում է խոսել երեխան, հակասում է նրա ազգային՝ բնածին բնավորությանը, ապա այդ լեզուն երբեք այն ուժեղ ազդեցությունը չի գործի նրա հոգևոր զարգացման վրա, ինչպիսին կգործեր նրան հարազատ լեզու, երբեք չի ներթափանցի նրա հոգու և մարմնի մեջ, երբեք չի արձակի այնպիսի խոր, փարթամ, առատ զարգացում խոստացող առողջ արմատներ»[2]:

Մայրենի լեզվի ուսուցման համար նախագծեր իրականացնելիս կարևոր է ընտրել թեմաներ, որոնք համապատասխանում են աշակերտների կյանքին և հետաքրքրություններին: Սա կօգնի նրանց մոտիվացնել և ավելի հաճելի դարձնել ուսուցման փորձը: Նախագծի միջոցով ուսուցումը կարող է հիանալի միջոց լինել աշակերտների համար ներգրավելու և օգնելու նրանց սովորել նոր բառապաշար և քերականական կառուցվածքներ իրենց մայրենի լեզվով: Նախագծային ուսուցման ժամանակ կարևոր է.

1. *Խրախուսել և համագործակցել.* Այստեղ շեշտը դրվում է համագործակցության և թիմային աշխատանքի վրա: Նախագծի վրա աշխատելիս աշակերտները կարող են միասին աշխատել՝ լուծելու խնդիրներ և կիսվելու իրենց գաղափարներով: Սա ոչ միայն օգնում է բարելավել իրենց լեզվական հմտությունները, այլ նաև օգնում է նրանց

զարգացնել սոցիալական հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը և համագործակցությունը:

2. *Տրամադրել իրական փորձի օրինակ.* Աշակերտներին իրական աշխարհի փորձառություններ տրամադրելը կարող է օգնել ամրապնդել նրանց լեզվական հմտությունները և զարգացնել վստահությունը: Օրինակ, աշակերտները կարող են հարցազրույցներ վարել կամ ստեղծել տեսանյութեր, ներկայացումներ ստեղծել իրենց մայրենի լեզվով:

3. *Օգտագործել տեխնոլոգիա.* Տեխնոլոգիան կարող է հիանալի գործիք լինել մայրենի լեզվի ուսուցման արդյունավետության բարձրացման համար: Այն կարող է օգտագործվել մուլտիմեդիա նախագծեր ստեղծելու համար, ինչպիսիք են տեսանյութերը կամ փոդքաստները, որոնք կարող են սովորելու զվարճալի և գրավիչ միջոց լինել:

4. *Տրամադրել հետադարձ կապ.* Հետադարձ կապը այս մեթոդի կարևոր բաղադրիչ է: Ուսուցիչները կարող են հետադարձ կապի միջոցով գնահատական տալ աշակերտների աշխատանքին և օգնել նրանց բացահայտել բարելավման ենթակա ոլորտները: Աշակերտները ևս կարող են անդրադառնալ իրենց ուսումնական փորձառություններին և բացահայտել ռազմավարությունները, որոնք են ավելի լավ արդյունք ապահովել:

Արդյունավետ ուսուցման կարևորագույն պահանջներից են ինտեգրված ուսուցումը, քննադատական մտածողության զարգացումը, պատճառաբանված ուսուցումը (ինչու՞ է սովորում, որտե՞ղ է կիրառելու): Այս արդյունավետ ուսուցման պահանջները օգտագործում են մի համալիր մեթոդ՝ նախագծային մեթոդը, որի ըմբռնման հիմնադրույթն է. «Այն ամենը, ինչ սովորում եմ, գիտեմ, թե ինչի համար է ինձ անհրաժեշտ, որտեղ և ինչպես կարող եմ կիրառել այդ գիտելիքները»:

Նախագծային աշխատանքներում ակնառու է մայրենի լեզվի ուսուցման արդյունավետության բարձրացումը: Նախագծային աշխատանքը հանգեցնում է լեզվի նպատակային օգտագործման: Սովորողները նյութը փնտրում են, ընտրում կարևորը, կատարում մտքերի փոխանակում գրավոր կամ բանավոր խոսքով՝ զարգացնելով 4 հմտություններ՝ կարդալ, գրել, լսել, խոսել: Հարստանում է բառապաշարը, տեսնում ուսումնասիրվող առարկայի ամբողջական պատկերը: Կատարելով՝ համեմատում-վերլուծություն-եզրահանգում սովորողների մոտ զարգանում է խոսքը, քննադատական

մտածողությունը: Նախագծային մեթոդն անհրաժեշտություն է մայրենիի ուսուցման արդյունավետության մեջ, այն ընդգրկում է հաղորդակցական մոտեցման 3 հիմնական տարրեր.

1. *Մոտիվացիա* ՝ ինչպես են աշակերտները վերաբերվում առաջադրանքին
2. *Արդիականություն*՝ ինչպես են սովորողները վերաբերվում լեզվին
3. *Մտահոգություն*՝ կրթական արժեքների նկատմամբ, ինչպես է լեզվի ուսումնական ծրագիրը առնչվում սովորողի ընդհանուր կրթական զարգացմանը:

ԳԼՈՒԽ 2: «ՍԵՎԱՆԱ ԼԻՃԸ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Մայրենի լեզվի ուսուցման ժամանակ VI դասարանում ուսումնասիրվում է Սևանա լիճ թեման: Սևանը հայկական բնության հրաշք զարդերից է: Սևանը մեծ դեր ունի երկրի տնտեսության մեջ: Սառնորակ ու քաղցրահամ ջրերն օգտագործվում են խմելու, ոռոգման, էլկտրաէներգիա ստանալու համար:

Ջինջ է Սևանը անամպ օրերին, այն հազար գեղեցկություն ունի տարվա բոլոր պահերին:

Սակայն Սևանա լիճը լուրջ հոգսեր ունի: Անհրաժեշտ է հանուն Սևանի հնչեցնել բոլոր զանգերը…[3]

Նախքան նախագծային մեթոդի կիրառումը, թեմայի շրջանակներում իրականացրել ենք դաս՝ *համատեղ դասավանդման մոդել՝ թիմային դասավանդում* եղանակով:

Դասի պլան

Ուսուցիչ՝ Ե. Մալխասյան Առարկա՝ Մայրենի Դասարան՝ 6-րդ

Դասի թեմա- Մարգո Ղուկասյան «Ու՞ր է կղզյակն Սևանա» էջ 116

Գեղարվեստական և գիտական խոսք, էջ 115

Դասի նպատակը.

Ուսուցանող- տարբերել գեղարվեստական և գիտական խոսքը, ամրապնդել Սևանա լճի մասին գեղարվեստական և գիտական տեղեկությունները, տեղեկանալ լճի այսօրվա վիճակի մասին, առաջարկել հնարներ լճի պահպանման համար:

ԿԱՊԿՈՒ սովորողները իմանան լճի մասին մի քանի կարևոր փաստ:

Դաստիարակչական- յուրաքանչյուր աշակերտ արժևորի Սևանա լճի նշանակությունը և կարևորությունը հայ ժողովրդի կյանքում, կարևորի լճի պահպանմանը առնչվող յուրաքանչյուր ծրագիր:

Զարգացնող-նպաստել աշակերտների ընդհանուր ուսումնական և հատուկ կարողությունների, բանավոր խոսքի զարգացմանը:

Դասի տեսակը.-Համատեղ դասավանդման մոդել՝ թիմային դասավանդում: Նպատակը՝մասնագիտական հմտությունների փոխանակում, նպատակաուղղված համագործակցություն:

Դասի տիպը- գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման դաս:

Ընտրված մեթոդներ- Հարց ու պատասխան, Աշխատանք զույգերով:

Անհրաժեշտ պարագաներ- համակարգիչ, ՀՀ քարտեզ, գրենական պիտույքներ:

Դասի ընթացքը

Խթանում- Հանձնարարել դասը մաս-մաս կարդալ, ուշադրությունը կենտրոնացնել գեղեցիկ և առոգանությամբ կարդալու հմտության վրա: 7ր.

Նոր նյութի ներկայացում- Կիրառել «Հարց ու պատասխան» մեթոդը. սահիկաշարով ցուցադրել Սևանա լճի նկարներ և ուղղել հարց՝ ծանո՞թ է: Լսել պատասխանները, ապա հնչեցնել հաջորդ հարցը. ինչպիսի՞ բառերով և բառակապակցություններով կբնորոշեք Սևանը: Բերել մեկ օրինակ, լսել պատասխանները: Ի՞նչ գեղարվեստական ստեղծագործություններ գիտեք Սևանա լճի մասին:

ԿԱՊԿՈՒ աշակերտներին Սևանա լճի մասին ուղղել պարզ հարցեր: 5ր.

Ապա աշակերտների համար ընթերցել Վախթանգ Անանյանի «Սևանի ափին» ստեղծագործությունից հատված: /Մալխասյան/ 3ր.

Ուղղել հարց. ի՞նչ գիտեք լճերի մասին, լսել պատասխանները: Ներկայացնել գիտական տեղեկություններ Սևանա լճի մասին, օգտագործել ՀՀ քարտեզը՝ լճի մասին աշխարհագրական տեղեկություններ ներկայացնելու նպատակով: /Սահակյան/ 5ր.

Հնչեցնել հարց. ի՞նչ նկատեցիք երկու ուսուցիչների խոսքում: Վերհիշել գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները: /Մալխասյան/ 3ր.

Ուղղորդված գործնական աշխատանք- Կիրառել «Աշխատանք զույգերով» մեթոդը. աշակերտներին բաժանել քարտեր և հանձնարարել որոշել, թե տրված նախադասությունները խոսքի ո՞ր տեսակին են պատկանում, ապա թերթիկը ամրացնել գրատախտակին նախօրոք գծված աղյուսակի ընտրված հատվածում: Վերջում հանձնարարել նաև դասավորել նախադասությունները ճիշտ հերթականությամբ և ընթերցել: /Մալխասյան, Սահակյան/ 10ր.

Ինքն. աշխատանք- Հարցերի միջոցով անդրադառնալ դասանյութում արծածված խնդիրներին, ապա հանձնարարել կատարել վարժություն 5-ը, էջ 118: 5ր.

ԿԱՊԿՈՒ աշակերտներին հանձնարարել դասանյութից կատարել արտագրություն:

Կշռադատում- ընթերցել հանձնարարված աշխատանքը, քննարկել:/Մալխասյան, Սահակյան/ 5ր.

Տնային աշխատանք- Մարգո Ղուկասյան «Ու՞ր է կղզյակն Սևանա» էջ 116 կարդալ, պատմել, վարժ.4:

Գնահատում- Կատարել ձևավորող գնահատում՝ հետադարձ կապ ապահովելով թեմայի շուրջ գիտելիքների ներկայացման ընթացքում: Կատարել միավորային գնահատում՝ ըստ չափորոշչի: 2ր.

Թեմայի ուսումնասիրությունը իրականացրել ենք նաև **Նախագծային մեթոդի** կիրառմամբ.

Նախագծի թեման ՝ «Սևանա լիճ»

Արդիականությունը՝ Սևանա լճի գույնի փոփոխությունը, ճահճացումը, լճափնյա տարածքների աղտոտվածությունը կարող են տանել լճի ծերացման, որը շատ վատ հետևանքներ կարող է ունենալ մեզ համար, մեր հայրենիքի համար:

Հիմնախնդիրների ուսումնասիրությունն ու համախմբված օգնությունը կարևոր են Սևանա լճի ջրերի մաքրման և լիճը ծաղկելուց փրկելու համար:

Տեսակն ըստ բովանդակության՝ տեղեկատվական-ստեղծագործական

Տեսակն ըստ ժամանակի՝ կարճաժամկետ

Տեսակն ըստ մասնակիցների քանակի՝ խմբային /4-5աշակերտ/

Աշխատանքի ձևը՝ արտադասարանական հետազոտություններ, դասարանական քննարկումներ, ընդհանրացնել և համակարգել ուսումնասիրված թեմայի վերաբերյալ գիտելիքները և ներկայացնել:

Նպատակը՝

1. Ակտիվացնել ստեղծագործական ներուժը, քննադատական մտածողությունը

2. Տիրապետել Սևանա լճի մասին ամբողջական տեղեկատվությանը, բացահայտել հիմնախնդիրները, ձևավորել առաջարկություն անելու հմտություններ

3. Ըմբռնել բնության և մարդու փոխկապվածությունը

4. Հայրենաճանաչություն

Խնդիրները

- ✓ Մեդիա դաշտից ճիշտ օգտվելու և տեղեկատվության համակարգում
- ✓ Համագործակցության արժևորում, սովորել սովորելու կարևորության գիտակցում
- ✓ Քայլաշարով աշխատելու, դժվարությունները հաղթահարելու, անդրադարձ կատարելու, առաջարկություն անելու, բանավիճելու հմտության դրսևորում
- ✓ Գեղեցիկ, գրագետ արտահայտվելու և ստեղծագործաբար ներկայացնելու կարողության զարգացում:

Նախագծային մեթոդով թեմայի ուսումնասիրության ավարտին աշակերտները պետք է կարողանան գրագետ, ամբողջական պատկերով ներկայացնել Սևանը, կատարել առաջարկություններ և ցուցաբերել ստեղծագործական մոտեցում՝ հասկանալով իրենց դերը շրջակա միջավայրի պահպանության գործում:

Ինտեգրված առարկաներ՝ «Մաթեմատիկա», «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա», «Աշխարհագրություն»:

<u>Նախագծի կատարման փուլերը</u>

<u>Առաջին փուլ</u>: **Նախապատրաստում**.

Մուտքի զրույց՝ հետևյալ նպատակներով

- ➢ Սևանա լճի մասին սկզբնական պատկերացման ձևավորում
- ➢ Տվյալ թեմայի նկատմամբ հետաքրքրության ձևավորում /մոտիվացիայով/
- ➢ Հետագա ստեղծագործական գործունեության համար հնարավորությունների և պայմանների ստեղծում

Տեղեկատվության սկզբնաղբյուրների որոշում	Տեղեկատվական սկզբնաղբյուրների ճշգրտում	Հետազոտողների տվյալների հավաքագրում, արձանագրում, խմբում քննարկումներ	Մեդիա դաշտում ճիշտ կողմնորոշվելու հմտությունների ձևավորում
Հավաքագրում, ընթացիկ խնդիրների լուծում	Հանդիպման կազմակերպում «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաների ուսուցիչների հետ՝ թեմայի լուսաբանում	«Արվեստասերներ»ի խումբ՝ գեղարվեստական ստեղծագործությունների որոնողական աշխատանքներ	Կարողունակությունների ձևավորում՝ սովորել սովորելու, համագործակցելու, ժողովրդավարական և քաղաքացիական
Ամփոփիչ արդյունքների պլանավորում	Գործունեության ղեկավարում		
Պարտականություն-ների բաշխում	Առանձին խմբերի հետ աշխատանք		

<u>Երկրորդ փուլ</u>: **Նախագծային և հետազոտական աշխատանքների կազմակերպում**

Արդյունքների և տեղեկատվության վերլուծություն, եզրակացության ձևակերպում	Եզրահանգում, դիտարկումներ, խորհուրդներ	Տեղեկատվության վերլուծություն, արդյունքների ձևակերպում	Սովորել սովորելու, լեզվական, մաթեմատիկական, ժողովրդավարական և քաղաքացիական, մշակութային, տնտեսական կարողունակություններ

Երրորդ փուլ: **Պատրաստի արդյունքների ներկայացում**

Տարաբնույթ ձևերով արդյունքի ներկայացում. ✓ Դաս 1- ծանոթացում խմբերի աշխատանքներին ✓ Դաս 2- յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը՝ սահիկաշարերով
Ծանոթացում պատրաստի աշխատանքներին ✓ Հարցերի ձևակերպում որպես մասնակից
Հաշվետվություն խմբերով ✓ «Պատմաբաններ»- ներկայացնել Սևանա լճի անվանը վերաբերող ավանդազրույցներ, լճի առաջացման պատմություններ ✓ «Աշխարհագրագետներ» կիրառել գիտական խոսք. Ներկայացնել Սևանա լճի տարածքային տվյալները/ գործնական աշխատանք՝ Սևանա լճի մանրակերտի պատրաստում ✓ «Կենսաբաններ» ներկայացնել Սևանա լճի բուսական և կենդանական աշխարհը/ գործնական աշխատանք՝ Մաքուր ջուրը կյանքի աղբյուր է ✓ «Արվեստասերներ» ներկայացնել արձակ և չափածո ստեղծագործություններ, հանելուկներ Սևանի մասին ✓ «Բնապահպաններ» Ներկայացնել Սևանա լճի հիմնախնդիրները, առաջարկել խնդիրների վերացման ուղիներ, նամակներ բնապահպանական կազմակերպություններին՝ «Չքնաղ Սևանի հորդորը»
✓ Լեզվական կարողություն և գրագիտություն ✓ Սովորել սովորելու կարողունակություն ✓ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն ✓ Ճողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն ✓ Թվայի և մեդիա կարողունակություն ✓ Մշակութային կարողունակություն ✓ Տեսական կարողունակություն

Չորրորդ փուլ: **Գործողությունների և աշխատանքի արդյունքի գնահատում**

- ✓ Սովորողների ջանքերի, մտածողության, սկզբնաղբյուրների օգտագործման որակի, գրագետ, գեղեցիկ և ստեղծագործաբար ներկայացնելու գնահատում
- ✓ Մասնակցություն գնահատման գործընթացին՝կոլեկտիվ քննարկման և ինքնագնահատման միջոցով:

Գործնականաշխատանք 1

«Աշխարհագրագետներ» - Սևանի շրջակա լեռնաշխարհի տարածական պատկերում՝ մանրակերտի ցուցադրում:

Գործնական աշխատանք 2

«Կենսաբաններ» - համեմատելով 2 ջրամանների փորձարկման արդյունքները՝ պարզաբանեցին 2-րդ ջրամանի «աղտոտված» ձկների սատկելու պատճառները՝ անդրադառնալով Սևանի հիմնախնդիրներին[4]:

Եզրակացություն

Այս հետազոտական աշխատանքի արդյունքում կատարեցի հետևյալ եզրահանգումները՝

- ✓ Նախագծային մեթոդի ներդրում դպրոցներում էական կերպով նպաստում է կրթության որակի բարձրացմանը,որը պայմանավորված է մեթոդի աշակերտակենտրոն լինելու հանգամանքով
- ✓ Նախագծային աշխատանքը նպաստում է երևակայության, հիշողության, ինքնաճանաչողության, մտածողության զարգացմանը
- ✓ Նախագծային աշխատանքը նպաստում է և՛ համագործակցային կարողությունների ձևավորմանը, և՛ արթնացնում ոգևորություն
- ✓ Նախագծային ուսուցումը նպաստում է նյութի արդյունավետ յուրացմանը։

Նախագծային աշխատանքը կատարվում է մայրենի լեզվով, որով հաղորդակցվում են խմբով, կարդում նյութը, պարզում նորածանոթ բառերի իմաստները, շարադրում մտքերը՝ իրար օգնելով, իսկ սովորել սովորեցնելու մեթոդով ավելի լավ են սովորում։ Տեղեկատվական տիրույթում ընտրում են ամենապահանջված նյութերը, տեղեկատվությունը, ապա համատեղ մշակում են դրանք։ Կարևորվում է գեղեցիկ խոսքը։

Վերը նշված երեք դրական եզրահանգումները պարարտ հող են ստեղծում սովորել սովորեցնելու մեթոդով ավելի լավ տիրապետելու համար մայրենիին։

«Սևանա լիճը» նախագծային աշխատանքով ավելի ակնառու էր մայրենիի ուսուցման արդյունավետությունը։ Թեման յուրացրել էին և՛ համագործակցային խմբերը, և՛ մյուս խմբերը։ Կարողացան խմբերով գեղեցիկ ներկայանալ և ներկայացնել իրենց վերջնարդյունքները։

Նրանց հոգում ծլարձակում էր մայրենին՝ սնվելով նաև այլ առարկաների նորանոր բառերով և մտքերով...

Մայրենիի ուսուցումը միանշանակ արդյունավետ է նախագծային ուսուցման մեթոդով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան «Գործնական աշխատանքներ մայրենից», «Զանգակ» հրատարակչություն, 2012թ էջ 17-26

2. Հ. Լ. Հարությունյան «Հետաքրքրաշարժ հայոց լեզու»: «Լույս» հրատարակչություն, 1975 էջ 3

3. «Ի՞նչ է, ո՞վ է» հանրագիտարան, հատոր 4, Երևան, 1987 էջ 134-136

4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան «Գործնական աշխատանքներ մայրենից», «Զանգակ» հրատարակչություն, 2012թ